

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ռուզաննա Առաքելյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Ներկայացված նախագծերով չեն լուծվում կից հիմնավորմամբ ներկայացված՝ սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերն անհրաժեշտ մասնագետներով ապահովելու, ինչպես նաև այդ բնակավայրերում առկա և երկարաժամկետ հատվածում չհամալրվող, այդ թվում՝ հիմնականում բժիշկների և ուսուցիչների աշխատատեղերը համալրելու խնդիրները,

քանի որ բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո կարող են ցանկություն չհայտնել վերադառնալու սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրեր: Որպես խնդրի լուծման տարբերակ՝ կարող է լինել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջների համաձայն պետական պատվերով բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների հետ պայմանագրի կնքումը, որպեսզի համապատասխան անձն ավարտելուց հետո ոչ պակաս, քան 3 տարի ժամկետով գործուղվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախատեսված վայրեր՝ աշխատելու: Անհրաժեշտ է նախատեսել նաև դրույթ պայմանագիրը չկատարելու դեպքում պատժամիջոցների մասին:

Առաջարկը չի հակասում որևէ իրավական ակտի, այլ ընդհակառակը, ուղղակիորեն բխում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներից:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 238-Ն որոշմամբ հաստատված բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի «XII. Բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը» բաժնի 99-րդ կետով սահմանված է. «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային համայնքների ու դպրոցների ներկայացրած հայտերի հիման վրա մանկավարժական մասնագիտություններին հատկացված (Հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի պետական լեզվաբանական համալսարան, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ, Վանաձորի պետական մանկավարժական

ինստիտուտ, Գորիսի պետական համալսարան) անվճար տեղերի՝ մինչև 50 տոկոսի չափով կազմակերպվում է մանկավարժական կադրերի նպատակային ընդունելություն»:

Նշենք նաև, որ յուրաքանչյուր տարի, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանամերձ համայնքները, լեռնային ու բարձր լեռնային բնակավայրերն ուսուցչական կադրերով ապահովելու նպատակով, մանկավարժական մասնագիտությունների գծով բակալավրիատի կրթական ծրագրով հատկացված անվճար (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) տեղերի՝ մինչև 50 տոկոսի չափով՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով կազմակերպվել է նպատակային ընդունելություն:

Առաջարկում ենք «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածը և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը «անվճար» բառից առաջ լրացնել «մրցութային կարգով» բառերով:

Միաժամանակ առաջարկում ենք «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ կետը «ձևերով ուսուցման» բառերից հետո լրացնել «ինչպես նաև սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրեր գործուղման համար» բառերով:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված նախագծերն օրենսդրական տեխնիկայի առումով խմբագրման կարիք ունեն, մասնավորապես՝

1) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին

հողվածն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի և 43-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության պահանջներին, որոնց համաձայն «օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը (այսուհետ՝ ընդունման օր), թիվը և «օրենք» բառը և «իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ իրավական ակտի գործողությունը դադարեցնող իրավական ակտում տրվում է իրավական ակտի լրիվ անվանումը»:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի 1-ին հոդվածներին.

2) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «բնագավառներում» բառն անհրաժեշտ է փոխարինել «բնագավառների» բառով՝ նկատի ունենալով նշված օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-853-23.03.2010-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում եւ փոփոխություն կատարելու մասին**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Պետությունը սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված եւ վերջին տասը տարում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է անվճար նախնական (արհեստագործական), միջին եւ բարձրագույն մասնագիտական կրթություն:»:

**ՀՈՂՎԱԾ 2.** Օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների, ուսումնական հաստատությունների, սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերի:ե:

**ՀՈՂՎԱԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ  
Պ-853<sup>1</sup>-23.03.2010-ԳԿ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին Հայաստանի Հանապետության օրենքում լրացումներ կատարելու մասին**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

1-ին մասի 2-րդ կետում «բնագավառներում և բառից հետո լրացնել», ինչպես նաև սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում և բառերը.

3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Պետությունը սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված եւ վերջին տասը տարում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունք:ե:

**ՀՈՂՎԱԾ 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝

առաջին պարբերությունում «անապահով և բառերից հետո լրացնել», ինչպես նաև սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղված և բառերը.

երրորդ պարբերությունում «համար և բառից հետո լրացնել», ինչպես նաև սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղված ուսանողներին և բառերը:

**ՀՈՂՎԱԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ  
Պ-853<sup>2</sup>-23.03.2010-ԳԿ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին եւ  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի «անապահովե բառերից հետո լրացնել», ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղվածե բառերը.

**ՀՈՂՎԱԾ 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «բնագավառներումե բառից հետո լրացնել», ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերումե բառերը.

**ՀՈՂՎԱԾ 3.** Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝

առաջին պարբերությունում «անապահովե բառերից հետո լրացնել», ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղվածե բառերը.

երրորդ պարբերությունում «համարե բառից հետո լրացնել», ինչպես նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղված ուսանողներինե բառերը:

**ՀՈՂՎԱԾ 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Տեղեկանք-հիմնավորում**

**«Կրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասինե, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասինե եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման մասին.**

«Կրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասինե, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասինե եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր) մշակվել են նպատակ ունենալով ստեղծել օրենսդրական հիմքեր սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված եւ վերջին տասը տարում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար անվճար բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթություն ստանալու իրատեսական լրացուցիչ

հնարավորության ապահովման համար՝ այդ քաղաքացիներին պետական համապատասխան երաշխիք տրամադրելու ճանապարհով:

Նախագծերի ընդունումից հետո սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղված ուսանողները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նպաստի ձեռով ուսման վճարի փոխհատուցումից օգտվելու, ինչպես նաեւ պետական կրթաթոշակ ստանալու իրավունք կունենան: Արդյունքում կստեղծվի իրատեսական հնարավորություն Հայաստանի Հանրապետության սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերն անհրաժեշտ մասնագետներով ապահովելու, ինչպես նաեւ այդ բնակավայրերում առկա եւ երկարաժամկետ հատվածում չհամալրվող, այդ թվում՝ հիմնականում բժիշկների եւ ուսուցիչների, աշխատատեղերը համալրելու համար:

Վերոհիշյալը անհրաժեշտ եւ կարեւոր պայման է նաեւ սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերի սոցիալական վիճակի բարելավման, այդ բնակավայրերից բնակչության արտագաղթի ռիսկի նվազեցման, տնտեսական կայուն զարգացման ապահովման համար, ինչպես նաեւ կարող է հանդիսանալ արդյունավետ միջոցառում ժողավրդագրական քաղաքականության շրջանակներում: